Կ Ա Ր Ծ Ի Ք

ԿԱՐԼԵՆ ԱՐՄԵՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ «ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.03 «ՖԻՆԱՆՍՆԵՐ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Շուկայական տնտեսության պայմաններում ձեռնարկատիրության ոլորտի դերն անգնահատելի է սոցիալ-տնտեսական բազմաբնույթ հիմնախնդիրների լուծման գործում: Իր կարևորությամբ, հատկապես, առանձնանում է փոքր և միջին ձեռնարկատիրությունը, որը նպաստում է զբաղվածության ապահովմանը, մրցակցության խորացմանը, միջին խավի ձևավորմանը և մի շարք այլ խնդիրների լուծմանը: Այն, ստեղծելով տնտեսական հետաքրքրությունների և շահերի իրացման նախադրյալներ, անհատի բիզնես հակումների դրսևորման հնարավորություններ, կարևոր պայման է հանդիսանում երկրում սոցիալական կայունության ապահովման համար: Փոքր և միջին ձեռնարկությունները, հատկապես իրենց կայացման փուլում, բախվում են մի շարք դժվարությունների հետ, կապված նախնական կապիտալի ձևավորման, շրջանառության ծավալների ավելացման և ֆինանսավորման աղբյուրների ընդլայնման հետ: Այդ ուղղությամբ գոյություն ունեցող հիմնախնդիրների շարքում բիզնես գործընթացների իրականացման տեսանկյունից առավել կարևոր նշանակություն ունեն ֆինանսական միջոցների ներգրավման ու ֆինանսական ապահովվածության հետ կապված խնդիրների լուծումը: Աշխատանքը նվիրված է նշված հիմնախնդիրների ուսումնասիրությանն ու լուծման արդյունավետ մոտեցումների մշակմանը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի ***արդիականությունն ու հրատապությունը***:

Ատենախոսության ***կառուցվածքը*** հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ***առաջաբանում*** ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունն ու հրատապությունը, դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները: Այստեղ ամրագրված են այն հիմնական գիտական արդյունքները և դրանց գիտական նորույթը, որոնցով աշխատանքը ձեռք է բերում գիտական արժեք, բնութագրված են տեսական ու մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության ***առաջին գլխում*** քննարկվել են փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսավորման տեսամեթոդական հիմքերը և տվյալ ոլորտի սուբյեկտների ֆինանսական միջոցների ձևավորման արտաքին աղբյուրները:

Ատենախոսության ***երկրորդ գլխում*** ներկայացվել է փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի վիճակը և վերլուծության են ենթարկվել ֆինանսական ռեուրսների ներգրավման հիմնախնդիրները:

Ատենախոսության ***երրորդ գլխում*** մշակվել են փոքր և միջին ձեռնարկությունների համար ֆինանսական միջոցների հասանելիության ու մատչելիության բարձրացման հիմնական ուղիները:

Ատենախոսությունում իրականացված վերլուծությունները հիմնված են դիտարկվող բնագավառի դասականների, ինչպես նաև ժամանակակից հետազոտողների ուսումնասիրությունների վրա: Մեթոդական և տեղեկատվական

առումով աշխատանքում օգտագործված են պաշտոնական շրջանառության մեջ գտնվող նյութեր և տվյալներ: Այս հանգամանքը թույլ է տվել հեղինակին ապահովել աշխատանքում ստացված արդյունքների անհրաժեշտ հիմնավորվածություն և հավաստիություն:

Աշխատանքի հիմնական ***գիտական նորույթը*** կայանում է ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման հասանելիության բարելավման համալիր գործիքակազմի, բանկային ֆինանսավորման նորարարական գործիքների զարգացման մոտեցումների և պետական գնումների գործընթացում այդ ոլորտի սուբյեկտների ներգրավվածության մակարդակի բարձրացմանն ուղղված համապատասխան ֆինանսական խթանների մշակման մեջ:

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ աշխատանքի արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում:

Ատենախոսության վերաբերյալ կան ***դիտողություններ***, որոնցից հատկապես կցանկանայինք ընդգծել հետևյալները:

1. Գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունները, որոնց ամբողջությունն իրենից ներկայացնում է ՓՄՁ ոլորտը, միմյանցից էականորեն տարբերվում են ինչպես գործունեության հետ կապված հիմնախնդիրներով և դժվարություններով, այնպես էլ զարգացման համար անհրաժեշտ պայմաններով և պահանջներով: Կարծում ենք, հեղինակը պետք է հաշվի առներ այդ իրողությունը՝ իր առաջարկություններում որոշակի տարբերակումներ իրականացնելով նշված սեգմենտների առումով:
2. Բանկային վարկավորման ժամանակ, անշուշտ, կարևոր նշանակություն ունի հաճախորդի վարկունակության գնահատումը: Գերփոքր և փոքր

ձեռնարկությունների դեպքում, մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով պայմանավորված, վարկունակության գնահատման դասական մեթոդները հիմնականում կիրառելի չեն: Կարծում ենք, աշխատանքը կշահեր, եթե հեղինակի կողմից առավել խորքային վերլուծության ենթարկվեին նշված հիմնախնդիրները և դիտարկվեին դրանց լուծման մոտեցումները:

3. Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ֆինանսական ապահովվածության մաարդակի բարձրացմանը որոշակիորեն կարող է նպաստել բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը, ինչը Հայաստանի Հանրապետությունում օրենսդրական մակարդակով հռչակված է որպես պետական աջակցության հիմնական ուղղություն: Ցանկալի կլիներ, որ հեղինակն առավել խորությամբ գնահատեր տրամադրվող աջակցության ազդեցությունը փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսական ապահովվածության վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները հետապնդում են հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը նվիրված հետագա ուսումնասիրությունների ուղղությունների բացահայտման նպատակ:

Կ. Մարգարյանի թեկնածուական ատենախոսությունն ունի գիտագործնական կարևոր նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար հրատապ ու արդիական խնդիրներ:

Հեղինակը հանդես է բերել մասնագիտական ու վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված

արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի ֆինանսավորմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման ժամանակ:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Կ. Մարգարյանի «Փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսավորման հասանելիության բարելավման խնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը. 00.03- «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
21.04.2020թ. Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Պարոն Գ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
պ. գ. թ.
ԵՊՀ գիտական քարտուղար Լ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

21.04.2020թ.